ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ

ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՏԱՐԵԿԱՆ 4 ԱՆԳԱՄ՝ ՄԱՐՏ, ՀՈՒՆԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ:

«2021Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ Ի ՓՈՒԼ

«2022թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 13-րդ պարբերաշրջանի ընտրական 1-ին փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի պատասխանների առավելագույն միավորը 10-ն է:

Խնդրի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարից և խնդրից հնարավոր է վաստակել առավելագույնը 20 միավոր:

Առաջին փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Առաջին փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել **press@gortsq.am**էլեկտրոնային հասցեին մինչև 2022թ. մայիսի 28-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.gortsq.am** կայքէջում՝ 2022թ. մայիսի 29-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ **–** Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2023 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2022Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ Ի ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

Հարց 1. Կազմակերպություններն կարող են համարվել փոխկապակցված՝

ա. սեփական դիմումի համաձայն.

բ. <u>հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ.</u>

գ. համալիր հարկային ստուգման արդյունքում.

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 2. Որ կազմակերպություններն են համարվում ՀՀ ռեզիդենտ կազմակերպություններ՝

ա. որի բոլոր հիմնադիրները համարվում են ՀՀ ռեզիդենտ.

բ. որի հիմնադիրները ՀՀ ռեզիդենտ իրավապաբական կամ ֆիզիկական անձինք են.

<u>գ. որի գտնվելու վայրը հանդիսանում է ՀՀ-ն.</u>

դ. որի փաստացի գործունեության վայրը հանդիսանում է Հայաստանը:

Հարց 3. Նշվածներից, որ դեպքում չի առաջանա եկամտային հարկի վճարման պարտավորություն.

ա. ՍՊԸ-ն իր աշխատակցին պարգևատրել է բնամթերային եղանակով,

բ. ԱՁ-ն իր աշխատակցին փոխառությամբ տոկոսով գումար է տրամադրել, այնուհետև տոկոսների վճարման պարտավորությունը զիջել

գ. ՀԿ-ն իր շահառուին անհատույց գումար է տրամադրել,

դ. Քաղիրավական պայմանագրով ֆիզիկական անձին վճարվող գումարից:

Հարց 4.Ձեռք բերված՝ հիմնական միջոցի գծով հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարի արտացոլում.

ա. Դեբետ 226
Կրեդիտ 521

բ. Դեբետ 261
Կրեդիտ 711

գ. Դեբետ 261
Կրեդիտ 521

Հարց 5. Կարճ ժամկետում վաճառքի նպատակով պահվող ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից եկամուտների արտացոլում.

ա. Դեբետ 231
Կրեդիտ 627

բ. Դեբետ 231
Կրեդիտ 322

գ. Դեբետ 231
Կրեդիտ 626

Հարց 6. Արտադրանքի վաճառքի հետ կապված ծախսերի ձևակերպում.

ա. Դեբետ 712
Կրեդիտ 252

բ. Դեբետ 711
Կրեդիտ 252

գ. Դեբետ 521
Կրեդիտ 252

Հարց 7. Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է՝

ա. հարկվող ժամանակավոր տարբերությունների (այսինքն՝ այնպիսի ժամանակավոր տարբ"որությունները, որոնք ապագա ժամանակաշրջանների հարկվող շահույթը որոշելիս հանգեցնում են հարկվող գումարների առաջացման), հետագա ժամանակաշրջաններ չտեղափոխ-վող հարկային վնասների և զեղչերի գծով

բ. նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների գծով (այսինքն՝ այնպիսի ժամանակա-վոր տարբերությունները, որոնք ապագա ժամանակաշրջանների հարկվող շահույթը որոշելիս հանգեցնում են նվազեցնող (հանվող) գումարների առաջացման). հետագա ժամանակաշրջաններ տեղափոխվող չօգտագործված հարկային վնասների և զեղչերի գծով .

գ. բյուջե ավել վճարված գումարների (գերավճարների) գծով.

դ. բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով:

Հարց 8. Արտադրական կազմակերպությունում նշվածներից որը չի համարվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝

ա. ոչ նյութական ակտիվների ձեռք բերումը.

բ. այլ կազմակերպության բաժնետոմսերի վաճառքը.

գ. տրամադրված փոխառությունների դիմաց տոկոսների ստացումը.

դ. ստացված փոխառությունների դիմաց տոկոսների վճարումը:

Հարց 9. Նշված ծախսումներից որոնք կարող են ներառվել պաշարների ինքնարժեքում՝

ա. փոխառության ծախսումները.

բ. ձեռքբերման ծախսումները.

գ. փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները.

դ. բոլոր պատասխանները ճիշտ են:

Հարց 10. Պաշարներն այն ակտիվներն են, որոնք՝

ա. արտադրության ընթացքում են՝ սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար .

բ. արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար.

գ. նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում և որոնց արժեքը չի գերազանցում 50 հազար դրամը.

դ. ճիշտ են «ա» և «բ» կետերում նշվածները:

«2022Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 13-ՐԴ ՇՐՋԱՆԻ

ԸՆՏՐԱԿԱՆ Ի ՓՈՒԼԻ

ԽՆԴԻՐԸ

ԱԲԳ ՍՊԸ-ն ստեղծվել է 01.10.2021թ.-ին, որի հիմնադիր է հանդիսցել ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲԻԶՆԵՍԻՆ ՀԿ-ն (100%): Սահմանված ժամկետում ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Կազմակերպությունը զբաղվել է մեծածախ առևտով և տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում կատարել է հետևյալ գործարքները՝

1. 4500 հազ. ՀՀ դրամ արժեքով գնել է կահույք, որի 10 տոկոսն օգտագործ է իր անձնական կարիքների համար, մնացած մասի 40 տոկոսն իրացվել է ինքնարժեքի նկատմամբ 15 տոկոս հավելագնով:
2. Մատուցվել են խորհրդատվական ծառայությունների, հիմնականում անվճար՝ ՀԿ-ի շահառուների համար և միայն 1500 հազ. ՀՀ դրամի շահառու չհանդիսացող անձանց: Եթե շահառուներին ևս մատուցվեր վճարովի ծառայություն, ապա իր կողմից սովորաբար կիրառվող գիներով համարժեք կլիներ 8000 հազ.-ի

Որոշել 2021թ.-ի 4-րդ եռամսյակի շրջանառության հարկով հարկման բազան՝ ըստ գործունեության տեսակների և շրջանառության հարկի գումարը:

ԽՆԴՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Առևտրական գործունեությունից եկամուտներ՝

Վճարման ենթակա

4,500,000-450,000=4,050,000

4,050,000*0.4=1620,000

1,620,000*1.15=1,863,000

1,863,000*0.05=93,150

Նվազեցման ենթակա

4,050,000*0,04=162,000

1,620,000>93,150

Վճարման ենթակա հարկ

1,863,000*0.015=27,945

Ծառայությունների մատուցումից հարկ

1,500,000*0,05=75,000

Վճարման ենթակա ընդհանուր հարկ՝ 102,945